ԿԱՐԾԻՔ

Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քաղաքական մշակույթը «Քաղաքագիտություն» գիտակարգի հիմնախնդիրների շարքում առանձնանում է իր բարդությամբ: Պատահական չէ, որ այն հաճախ համեմատում են կիբեռնետիկական *սև արկղի* հետ: Բնական է, որ նման բարդ քաղաքական երևույթի ուսումնասիրությունը պահանջում է հարցադրումների և հետազոտության մեթոդների հստակություն: Ակնհայտ է, որ որևէ մեկ աշխատության մեջ, որքան էլ այն հավակնի համապարփակության, հնարավոր չէ անդրադառնալ հիմնախնդրի տեսականորեն հրատապ բոլոր հարցադրումներին: Դրա համար էլ արդարացված են հետազոտական բոլոր այն փորձերը, որոնցում մեծ հիմնախնդրի համատեքստում կանխապես առանձնացվում են այն հարցերը, որոնք ընտրվում են որպես ուսումնասիրության գլխավոր թիրախներ: Նման սահմանափակումը իր հերթին ենթադրում է մեծ թեմայի համար առանձնացված հարցերի կարևորության ու հրատապության հիմնավորում: Հենց առանձնացված հարցերի նոր լուծումներն էլ նման դեպքերում ներկայացնում են որպես ձեռքբերում, իսկ ատենախոսության ձևաչափում՝ որպես պաշտպանության ներկայացվող նորույթ: Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի պաշտպանության ներկայացված ատենախոսության և նրա սեղմագրի հետ ծանոթությունը բերում է այն եզրակացության, որ հետազոտողի կողմից պաշտպանության ներկայացված գլխավոր նորույթը քաղաքական մշակույթի խոսույթային չափման (ՔՄԻՉ) մեթոդն է: Ատենախոսը այդ մասին հատուկ ընդգծել է

սեղմագրի 8-րդ էջում: «Քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի չափման և բնորոշման նպատակով մշակվել և կիրառվել է նոր մեթոդ՝ *քաղաքական մշակույթի խոսույթային չափման է (ՔՄԻՉ) մեթոդը,* որտեղ հաշվի են առնվում քաղաքական գործընթացի առանձնահատկությունները՝ որպես հասարակական համակարգի բազմաշերտ և բազմավեկտոր տրանսֆորմացիայի դրսևորումներ, ինչն արտահայտվում է համապատասխան քաղաքական խոսույթում»: Ցավոք առանցքային այս դրույթի ձևակերպումը հստակ չէ: Կաղում է շարադրանքի հայերենը: Պնդել, թե կիրառվում է «մեթոդ, որտեղ…» չի կարելի, քանի որ մեթոդը տեղ չէ, որ ասնեք «որտեղ»:

Այս օրինակին ես չէի անդրադառնա, եթե այն լիներ պատահական վրիպակ: Ցավոք, ատենախոսության և սեղմագրի մեջ նման օրինակները անցանկալի ձևով շատ են (մեղմ ասած ճշգրիտ չեն՝ «քաղաքական մշակույթի տեսական և մեթոդաբանական հիմքեր», «քաղաքական գործընթացի տեսական և քաղաքական հիմքեր» (էջ 6), «ՀՀ-ում քաղաքական և հասարակական զարգացումների տեսական հիմքերը, մասնավորապես քաղաքական խոսույթի և քաղաքական պրակտիկայի համապատասխանության խնդրի համեմատական վերլուծության առումով» (էջ 13) «ստույգ հասարակություններ», «քաղաքական խոսույթի վարչակարգային առանձնահատկություններ» (էջ 9), «ՀՀ-ում քաղաքական կարգի հաստատումը». «…այդ երկրներն անցել են եզակի ուղի՝ կոմունիստական վարչակարգից այլ վարչակարգի» (էջ 22), «Այդ երկրներում քաղաքական մշակույթը գտնվում է կախյալ վիճակում» (էջ 23) և այլն, և այլն: Այստեղ բոլոր հղումները նշված են ըստ սեղմագրի՝ հեշտացնելու համար դրանց որոնումը պաշտպանության խորհրդի անդամների կողմից, որոնց տրամադրության տակ, կարծում եմ, այն կլինի):

Սակայն վերը քաղաքական մշակույթի խոսույթային չափման մասին առանցքային դրույթի մեջ կա նաև իմաստային առումով մեղմ ասած խոցելի ձևակերպում: Եթե ինչ-որ վերապահումներով կարելի է խոսել քաղաքական մշակույթի չափման մասին (իրականում չափման ենթակա են քաղաքական մշակույթի տարբեր դրսևորումներ), ապա «քաղաքական վարչակարգի չափում» արտահայտությանը հազիվ թե հնարավոր լինի կոռեկտ իմաստ վերագրել:

Ես այն կարծիքին եմ, որ եթե ատենախոսը իր հետազոտությունը ամբողջովին նվիրեր քաղաքական մշակույթի խոսույթային չափմանը և ողջ խորությամբ վերհաներ, թե ինչ կերպափոխություններով ու ձևերով է քաղաքական մշակույթը ներկայանում, առարկայանում, «բոնելի դառնում» քաղաքական խոսույթում՝ դրանով քաղաքական խոսույթը դարձնելով քաղաքական մշակույթի «սև արկղը մտնելու դուռ», ապա մենք գործ կունենայինք իրոք լուրջ արդյունքի հավակնող ուսումնասիրության հետ: Այդպես չի արված ցավոք: Քաղաքական մշակույթի խոսույթային չափմանը (ՔՄԽՉ), որը հենց իր՝ ատենախոսության հեղինակի կողմից դիտվում է որպես սույն պաշտպանությանը ներկայացվող գլխավոր գիտական նորույթ, հատկացված է ընդամենը տասներեք էջ (տես ատենախոսության 108-121 էջերը): Սակայն, ինչպես դրան հպանցիկ կերպով անդրադառնում է ատենախոսը, քաղաքական խոսույթը քաղաքական մշակույթի կրավորական-հայելային դրսևորում-արտացոլումը չէ: Այն իր հերթին քաղաքական մշակույթի վրա ներազդող երևույթ է, և ատենախոսի կողմից առաջին պլան մղվող չափման հիմնախնդիրը այսպիսի մոտեցման դեպքում կարող էր թույլ տալ մտնել տեսական նոր բացահայտումների դաշտ:

Դրա փոխարեն ատենախոսության տեքստում (մենք նկատի ունենք բուն նյութի շարադրանքը՝ առանց օգտագործված գրականության ցանկի), որ շուրջ երեքհարյուր հիսուն էջ է կազմում, հսկայական ծավալ է հատկացված թեմային անմիջապես չառնչվող հարցերի շարադրանքին: Որպես օրինակ կարելի է հիշատակել թեմայի գիտական մշակվածությանը վերաբերվող 5-10 էջերը, որտեղ թվարկվում են արևմտյան, ռուսական և հայ այն հեղինակները, որոնք ընդհանրապես այս կամ այն կերպ անդրադարձել են *քաղաքական մշակույթ* կամ *քաղաքական գործընթաց* երևույթներին: Նույնը արված է ատենախոսության սեղմագրում, այն դեպքում, երբ պետք է խոսվեր հենց թեմայի կամ գոնե քաղաքական մշակույթի չափմանը վերաբերվող գրականության մեջ հանդիպող տեսանկյունները: Տարբեր հեղինակների անունների թվարկումը թեմայի գիտական մշակվածության վերհանում չէ:

Այդ հանգամանքը ակնառու կերպով արտացոլվել է ատենախոսության սեղմագրում, որում «Ատենախոսության հիմնական բովանդակությունը» բաժնին, որը պետք է կազմեր սեղմագրի ծավալի զգալի մասը, հատկացված է հինգուկես էջից

պակաս ծավալ: Դրա փոխարեն «Հիմնական եզրակացություններ ու առաջարկություններ» բաժնին հատկացված է ավելի քան տասներեք էջ (բուն ատենախոսության մեջ դրան հատկացված են 331-351 էջերը): Իհարկե, կարելի էր ըմբռնումով մոտենալ և հանդուրժել այդ անհամաչափությունը, եթե այն բովանդակայնորեն արդարացված լիներ և ունենար տեսական չափանիշներին բավարարող մակարդակ: Ցավով եմ արձանագրում, որ դա այդպես չէ: Իր երգրակացություններում ատենախոսը կամ ուղղակի կրկնում է նախորդիվ ասվածը կամ որպես գիտական եզրակացություններ ներկայացնում է երբեմն ակնհայտ ու հանրահայտնի, երբեմն պարզունակ, լրագրողական բնույթի պնդումներ:

Ինքնին ակնհայտ միտք է, որ քաղաքական մշակույթի հետազոտության և գնահատման մեթոդները նույն էվրիստիկ նշանակությունը չեն կարող ունենալ միմյանցից տարբեր հասարակությունների նկատմամբ կիրառելու դեպքում: Ատենախոսը սա դասում է իր կողմից կատարված գլխավոր եզրակացությոնների թվին (տես ատենախոսության 331 էջը): Խնդրահարույց է **քաղաքական մշակույթ** երևույթի՝ ատենախոսի կողմից տրված սահմանումը, որն ավելի շուտ երևույթի՝ սահմաններ չունեցող նկարագրություն է, քան սհմանում: Նա քաղաքական մշակույթը սահմանում է «որպես քաղաքական գաղափարների, գիտելիքների, ավանդույթների և արժեքների, քաղաքական մասնակցության և վարքագծի մոդելների, քաղաքական գիտակցության և սոցիալականացման փուլերի ու մակարդակների, քաղաքական հաղորդակցության միջոցների, քաղաքական ինստիտուտների փոխհարաբերակցության ամբողջություն, որը պայմանվորում է քաղաքական գործընթացները և արտահայտվում քաղաքական խոսույթի միջոցով» (տես ատենախոսության 332 էջը): Երևի քաղաքականության ոլորտին պատկանող որևէ բան չմնաց, որ չմտցվի այս «սահմանման» մեջ: Նման սահմանումը չի օգնում հասկանալու երևույթի բուն էությունը պայմանավորող հատկանիշը, որակը:

Ատենախոսության մեջ շատ են «ցանկությունների ձևաչափով« արված ակնհայտ և այդ տեսակետից տեսական լիցքից զուրկ առաջարկություններն ու պաշտպանության ներկայացված դրույթները, որոնք բերված են նաև սեղմագրում: Ահա դրանցից մեկը՝ «Քաղաքական ակտիվ մասնակցային մշակույթի պահպանումը և դրա

ինստիտուցիոնալացումն ի դեմս քաղաքացիական հասարակության ինստիտուտների մշտական զարգացման, **կարող են կանխարգելել** վարչակարգային հետընթացի հեռանկարը ՀՀ-ում: Քաղաքական ակտիվ վերահսկողությունը **կարող է ստեղծել** ուղիղ ժողովրդավարության ազդեցության գործիքներ նոր կառավարությանը «թավշյա» հեղափոխության սահմանած իդեալներից հեռանալ թույլ չտալու համար» (տես սեղմագրի 12 էջը): Մեր մամուլը լիքն է նման, ավելի ականջահաճո լրագրողական գրչից ծնված ձևակերպումներով: Սա պաշտպանության ներկայացնելի դրույթ չի կարող լինել:

Պետք ընդգծել, հարավ-կովկասյան բազմական հասարակություններում քաղաքական կայունության և քաղաքական մշակույթի փոխհարաբերակցության խնդրի համեմատական վերլուծությունը, որ ատենախոսության մեջ զբաղեցրել է քառասուն էջ, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական մշակույթի էվոլյուցիայի հետ առնչություն չունեցող նյութ է: Այն որպես խորհրդատվական տեղեկանք կարելի էր ուղարկել մեր անմիջական հարևաններին՝ Բաքու, Թբիլիսի, Անկարա և Թեհրան: Հայկական իրականության հետ այն առնչություններ չունի: ՀՀ-ն ազգային միատարր պետություն է, և մեզ մոտ չկան փոքրամասնությունների հետ կապված հրատապություն ներկայացնող հարցեր: Աշխատանքի այդ մասը ուղղակի կարկատանի տպավորություն է գործում:

Արենախոսությունը լեզվառճական լուրջ խմբագրման կարիք ունի:

Ես նշել եմ թեմայի ծավալման այն հնարավորությունները, որոնք կապահովեին ատենախոսական հետազոտության տրամաբանական ամբողջականությունը, թիրախայնությունը, կբարձրացնեին պաշտպանության ներկայացվող նորույթի գիտական արժեքը: Աշխատանքի ընդհանուր մակարդակը և որոշ հատվածներ, այդ թվում և 2018 թ. «թավշյա հեղափախությանը» նվիրված հատվածը, որը ցավոք համարժեք ձևով չի արտացոլված ատենախոսության սեղմագրում, հաստատում են, որ դա լուծելի հարց է Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի համար:

Ատենախոսության մեջ տեղ գտած նշված թերությունները բավական են եզրակացնելու, որ Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի ատենախոսությունը այս վիճակում պաշտպանության չէր կարելի բերել: Այս տեսքով այն չի բավարարում այն

պահանջներին, որոնք ներկայացվում են ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին հավակնող ատենախոսությանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Ալեքսանդր Մանասյան *Ա. Մանասյան*

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ.գ.դ., ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

Երևան, 14. 07. 2020

Պաշտոնական ընդդիմախոս՝ Ա. Մանասյան
ստորագրությունը հաստատում եմ